

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 26—31 օրերին Մոսկվայում, «Սովինցենտր»-ի սրահում, տեղի ունեցավ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) հերթական՝ հինգերորդ խորհրդակցությունը, որի նշանաբանն էր՝ «Հուսո դինամիկան—վստահություն, վինաթափում և խաղաղություն»:

Վեցօրյա խորհրդակցությանը, որը գումարվել էր Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հրավերով, մասնակցում էին տարբեր դավանությանց պատկանող Եկեղեցիների մոտ 70 ներկայացուցիչներ՝ ժամանած եվրոպական տասնհինգ երկրներից, ԱՄՆ-ից և ասիական երկրներից: Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին ներկայացնում էր Եվրոպայի Եպիսկոպոսական Կոնֆերանսի ներկայացուցիչը:

ԵԵԿ-ի 1979 թվականի ութերորդ համաժողովից հետո գումարված սույն խորհրդակցությանը, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, իրենց մասնակցությունը բերեցին նաև Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և Դամասկոսի հայոց առաջնորդ և Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանը:

Մայիսի 26-ին, հինգշաբթի օրը, խորհրդակցությունն իր աշխատանքն սկսեց Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ և ԵԵԿ-ի նախագահ Տ. Ալեքսեյի աղոթքով: Այնուհետև ԵԵԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Ուիլյամսը հանդես եկավ բացման խոսքով, որին հաջորդեց Մոսկվայի և համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի՝ խորհրդակցությանն ուղղված շնորհավորական գրի ընթերցումը:

Լիագումար նիստերում ընդարձակ վեկուցումներով հանդես եկան Շվեդիայի պետական քարտուղարի օգնական տիկ. Ինգա Թորսոնը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի աշխատակից պրոֆ. Ա. Ա. Կուցենկոն, Կրասնոդարի և Կուբանի առաջնորդ Տ. Վլադիմիր արքեպիսկոպոսը և պրոֆ. Հուբեր Վոլֆգանգը (ԳՖՀ): Ներկայացված չորս վեկուցումների թեմաներն էին համապատասխանաբար՝ «Եվրոպայի անվտանգությունը միջավայրային խաղաղության կոնտեքստի մեջ», «Վստահություն, վինաթափում, խաղաղություն», «Հույսի դինամիկը» և «Հուսո դինամիկան և Եկեղեցիների խաղաղասիրական առաքելությունը»:

Խորհրդակցության մասնակիցներին ջինիչ և հետաքրքրական մի վեկուցում տվեց նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի վինաթափման հարցերի գծով տեղակալ Յան Մարտինսոնը:

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսն իր խորհրդակցությունն ավարտեց մայիսի 31-ին, երեքշաբթի օրը, աշխատանքային ե-

րեք խմբերի արդյունավետ աշխատանքներից հետո: Նույն օրը, երեկոյան, լիագումար նիստում խորհրդակցությունն ընդունեց պաշտոնական երկու փաստաթղթեր՝ մի հաղորդագրություն և մի հուշագիր:

Խորհրդակցության ընթացքում առաջ քաշված բոլոր հարցերում շեշտվում էր արևմուտքում, արևելքում, հյուսիսում և հարավում եղբայրության, համագործակցության, վստահության, արդարության, խաղաղության հաստատման, ինչպես նաև Եվրոպան միջուկային վենքից վերծ պահելու անհրաժեշտությունը:

Հաղորդագրության մեջ նշված է, որ խորհրդակցությունը, դիմելով ԵԵԿ-ի անդամ բոլոր Եկեղեցիներին, խնդրում է այսուհետև ևս եկեղեցական արարողությունների ժամանակ աղոթել խաղաղության համար, գործով պաշտպանել վինաթափման ուղղությամբ պետությունների գործադրած ջանքերը և ամեն ճիգ ի գործ դնել՝ ապահովելու համար վստահությամբ և համագործակցությամբ ձեռք բերվելիք ամեն մի անհատի և բոլորի անվտանգությունը:

Մոսկվայում գումարված Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի սույն խորհրդակցությունն իր ընդունած կարևոր որոշումներով հանդիսացավ արժեքավոր մի ներդրում ԵԵԿ-ի առաջիկա 9-րդ համաժողովի նախապատրաստման ճանապարհին: